ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/26-2019 **ք.Արտաշատ**

„01„ 03 **2019թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ, 22-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի՝ «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 814-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնակատար Արման Դերմոյանի կողմից թիվ 01//01302-2019 և թիվ 01//01306-2019 ելից գրությունները ուշացումով՝ սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո հաստատելու/համաձայնեցնելու հանգամանքների, դրանց պատճառների պարզաբանման անհրաժեշտությունը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արարատի մարզպետարանում 2019 թվականի մարտի 1-ից նշանակել ծառայողական քննություն՝ Արարատի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնակատար Արման Դերմոյանի կողմից թիվ 01//01302-2019 և թիվ 01//01306-2019 ելից գրությունները ուշացումով՝ սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո հաստատելու/համաձայնեցնելու հանգամանքների, դրանց պատճառների հայտնաբերման և պարզաբանման նպատակով:

2. Ծառայողական քննության ընթացքում Արարատի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնակատար Արման Դերմոյանի լիազորությունները կասեցնել:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ Սուսաննա Խուդավերդյանին հանձնարարել՝ ծառայողական քննություն անցկացնել ս/թ մարտի 06-ը ներառյալ և արդյունքների մասին ներկայացնել համապատասխան եզրակացություն:

01.03.2019

X

ԳԱՐԻԿ ՄԱՐԳՍՅԱՆ